

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԹՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Պատուի Բուրակյան

ՎՐԱՑ ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Սայաթնուվագիտությունը այլ սկզբնավորում ունի հայ իրականության մեջ և այլ՝ վրաստանում: Հայ իրականության մեջ այն սկսվում է Գ. Ախվերդյանի մեծարժեք ուսումնասիրությամբ ու հանճարեղ գուսանի հայերեն խաղերի հրատարակությամբ: Հայ սայաթնուվագետներն, այնուհետև, աստիճանաբար լրացնում են խաղերի ցանկը, ճշտում ու մեկնում Ախվերդյանի մի քանի դրույթները, նոր լուսաբանում առաջարկում և այլն: Գ. Ախվերդյանն իսկապես հայտնաբերեց Սայաթ-Նուվային և իր աշխատասիրությամբ հայ սայաթնուվագիտության արժանավոր հիմնադիրը դարձավ:

Սայաթ-Նուվային վերաբերող հնագույն դիտողությունը՝ վրաց գրականության պատմության մեջ, նշանավոր հնագետ և վրաց մատենագրության պատմության քաջագիտակ Պլատոն Իոսելիանուն է պատկանում՝ գրված 1860-ական թվականներին: Պլ. Իոսելիանին տիրապետում էր հայոց լեզվին, ճանաչում իր ժամանակակից հայ մտավորականներին: Հորից՝ Իգնատիոս Իոսելիանուց, նա մատենագրական հարուստ ժառանգություն էր ստացել՝ «Պատմություն Գեորգի 13-րդ թագավորի» մենագրության բաժիններից մեկում Պլ. Իոսելիանին թվարկում ու բնութագրում է Գեորգի 13-րդին ժամանակակից մի շարք բանաստեղծների ու հասարակական գործիչների: Հենց այդ շարքում խոսվում է նաև Սայաթ-Նուվայի մասին. «103) Սայաթ-Նուվա, Թիֆլիսցի հայ, նշանավոր անձնավորություն, անվանի բանաստեղծ, մահացել է 1801 թվականին, պարզ-խոսակցական լեզվով գրող բանաստեղծ էր, սակայն սուր գաղափարներ ունեցող: Նրա ասածները դեռ այսօր էլ վրացիները իբրև պատկերավոր խոսք են գործածում (բառացի՝ իբրև առակ): Նաև երգիչ էր...»²:

Հիմքեր կան ենթադրելու, որ Պլ. Իոսելիանին ծանոթ է եղել նաև հայկական աղբյուրներին. նրա արխիվում պահպանվել են Միք. Չամչյանի նշանավոր «Պատմությունից» վրացերեն թարգմանված առանձին հատակտորներ:

Սայաթ-Նուվային վերաբերող հիշյալ հաղորդումը ժամանակակիցի վկայություն չէ, այլ գրառված է Ախվերդյանի հրատարակությունից ութ տարի հետո:

Սայաթ-Նուվայի խաղերը XIX դարի առաջին տասնամյակներում իրոք տարածված էին և բացի «պատկերավոր խոսք» լինելուց, աշուղ Խարալիի, Գր. Օրբելիանիի և այլոց կողմից իբրև բանաստեղծական բնաբան էին օգտագործվում, գրում էին «Սայաթ-Նուվայի հանգով»: Ծիշտ է նաև, որ աշուղի խաղերը

¹ Հայրը՝ Իգ. Իոսելիանին, նույնպես գիտեր հայերեն. Լենինգրադի Սալտիկով-Շչեգրինի անվ. հանրային գրադարանի վրացական ձեռագրերի հավաքածուում պահպանվել է «Մեկնություն սաղմոսաց»-ի նրա հայերենից վրացերեն կատարած թարգմանությունը (№ 90):

² Ետնադրված ձուռնի մեջ մեջ մեջ, այսպիսով ցանկացած ժամանակ հարուստ էր իր շնորհներով, Երևան, 1936, էջ 263. հ.մ. 1895, էջ 3:20:

գրված են «պարզ-խոսակցական լեզվով», բայց «սուր գաղափարներով»: Պլ. Իոսելիանին ճանաչել է Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը և արգարացիորեն բանաստեղծի անունը ղետեղել «Գեորգի թագավորին ժամանակակից անձինք՝ գործով ու սերմամբ, խոսքով ու վարքով անվանի» խորագրի տակ:

Ավելի կարևոր է պարզել Սայաթ-Նովայի մահը 1801 թ. տեղագրելու հավաստիությունը: Սայաթնովագետներ հանգուցյալ պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Քեկն ու Գ. Լեոնիձեն մեծ վստահությամբ են վերաբերվել այս հաղորդմանը՝ առանց Պլ. Իոսելիանու աղբյուրը կամ գոնե այս հատվածին նախորդող տեքստը քննարար մեկնելու: Իսկ նրանց աշխատություններն օգտագործող գիտնականները թվականն այլևս ապացուցված համարեցին: Սայաթնովագետ Մ. Հասրայանը գրում է. «Վրացական արխիվներից և այլ գրական տվյալներից Գ. Լեոնիձեն և պրոֆ. Մելիքսեթ-Քեկը հայտնաբերեցին վկայություններ, որ Սայաթ-Նովան մեռել է իր բնական մահով՝ 1801 թվականին»³:

«Վրացական արխիվներից ու գրական տվյալներից» Սայաթ-Նովայի մահվանը վերաբերող ոչինչ չի հայտնաբերվել: Վերոհիշյալ երկու գիտնականները պարզապես օգտագործել են Հովհան Արքայազնի «Կալմաստրայում» եղած տեղեկությունը Սայաթ-Նովայի Հաղբատում գտնվելու մասին և Պլ. Իոսելիանու վերոբերյալ դիտողությունը, որը տասնամյակներ առաջ հրապարակված էր:

Պլ. Իոսելիանին պատմական լինելով ունեցող որևէ փաստաթուղթ օգտագործելիս ամենայն բարեխղճությամբ վկայակոչում է իր աղբյուրը՝ «կորուստից փրկելու համար» այն լրիվ մեջբերելով: Մինչդեռ Սայաթ-Նովայի կապակցությամբ նա ոչ մի սկզբնաղբյուր չի նշում: Հավանաբար այդպիսի աղբյուրներ այլևս չկային, որովհետև նրանից առաջ այդ հարցով հատուկ զբաղվել էր Ի. Ախվերդյանը, որը ստիպված էր «ի դիտող արանց» ավանդություններ գրառելով բավարարվել:

Սայաթ-Նովային վերաբերող պարբերությունից մի քիչ առաջ, նույն էջում, Իոսելիանին խոսում է XVIII դարում շատ հայտնի բանաստեղծ Բեսիկիի (Բեսարիոն Գարաշվիլու) մասին: Նա գրում է. «Բեսիկի կամ Բեսարիոն Գարաշվիլի, բանաստեղծ, մահացել է 1799 թվին (sic): Սրա մասին շատ է գրվել, և ես այլևս չեմ կրկնում»⁴: Եվ իրոք, Բեսիկիին վերաբերող տասնյակ տեղեկություններ ու պատմական բովանդակությամբ գրադրություններ կան⁵: Բայց, հակառակ սպասվածի, Պլ. Իոսելիանին «շատ գրվելուց» հետո էլ սխալ է թվագրում: Բեսիկին մահացել է ոչ թե 1799 թ., ալ 1791 թ. հունվարի 24-ին: Եթե Բեսիկիի մահվան մասին Պլ. Իոսելիանին հավաստի տեղեկություններ չունեն, ապա նա որտեղից հավաստի աղբյուր կունենար Սայաթ-Նովայի մասին: Հաղորդման երկրորդ մասը (լինագիրը չենք առկոչում) ինքնին լուրջառում է հավաստի աղբյուրի առկայությունը:

Գ. Ախվերդյանի հրատարակությանը հաջորդող տաս տարում (1852—1862) վրաց գրական միտքը որևէ կերպ չի արձագանքել Սայաթ-Նովայի խաղերի հայտնաբերմանը կամ գոնե այդպիսի արձագանք դեռ հայտնի չէ: Դժվար է ասել, թե վրաց մտավորականները չգիտեին այդ հրատարակության մասին: Ամենայն հավանականությամբ դեռևս անհայտ էր վրացական խաղերի դավ-

³ Սայաթ-Նովա, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 307:

⁴ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 263:

⁵ Որոշ փաստաթղթեր տե՛ս "Ճյուղ", տձ., 1962:

թարը, ան, որ այժմ կենդանի է պահվում (Georg. 222), Վրաց նշանավոր գիտնական-բառարանագիր Դ. Չուբինաշվիլին (ապրում ու գործում էր Պետերբուրգում) «Վրաց անթուղիայի» 2-րդ հատորը կազմելիս առաջին անգամ տպագրեց Սայաթ-Նովայի երեք խաղ՝ («შე საწყალო ჩემო თავო» — Իմ խեղճ գուլխ, «სიკეთისა ამბავი» — Արդի պես պղտոր ես, Բուռ, և «გულიდამ არა მშურს» — Ես քեզ սրտով չեմ նախանձում): Չուբինաշվիլին վրացերեն բնագիրը վերցրել էր իր իսկ հնագրանի մի դրագրից⁶:

Բնական է, աստիճանաբար ծավալվում էր հետաքրքրությունը Վրացական «Դրոեբա» թերթը 1868 թ. տպագրելով մի խաղ, ծանոթագրության մեջ իր ընթերցողներին է դիմում հետևյալ կոչով.

«Սայաթ-Նովայի խաղերից է, Սայաթ-Նովան և Ալավերդյան ժամանակակիցներ են եղել՝ Թբիլիսիի երգիչ-սազանդարներ, հմբագրությունը խոնարհաբար խնդրում է «Դրոեբայի» ընթերցողներին, որ եթե գիտեն Սայաթ-Նովայի խաղերի տեղը՝ խմբագրությանն ուղարկեն ի տպագրություն, Սայաթ-Նովայի խաղերը մեղ մոտ այն պատվին են արժանի, ինչ ժողովրդական երգերին ու խաղերին է պատկանում»⁷:

Խմբագրության հրապարակած խաղը իրականում Սայաթ-Նովային չի պատկանում: Վերջին տողերում նշվում է հեղինակը՝ աշուղ Ալավերդյան: Այնուամենայնիվ, բերված կոչը վկայում էր, որ վրաց մտավորականները հետամուտ էին Սայաթ-Նովայի խաղերը հայտնաբերելուն ու հրատարակելուն:

Անցյալ դարի 60—70-ական թվականներին Թբիլիսիում դեռևս կային աշուղ-սազանդարներ, որոնք գրում ու կատարում էին երկու-երեք լեզուներով, իսկ դա օժանդակում էր գրական ընդհանուր միջավայր ստեղծելուն: Անկասկած է նաև, որ այդ աշուղ-սազանդարները դեռևս կատարում էին և Սայաթ-Նովայի երգերից: Ժամանակի նշանավոր աշուղ-բանահավաք Սկանդար-Նովան, 1870 թ. հրատարակած իր «საღბნო საზნობარი» («Խրախճանքի երգեր») ժողովածուում զետեղում է Սայաթ-Նովայի մինչ այդ անհայտ (չտպագրված) չորս խաղ («საყვარლის ბაღში» — Սիրուհուս այգում..., «არვის უარი არ უთქვამს» — Ոչ ոքի չի մերժել..., «ჯალოოს თუთი» — Երգում է թուխան..., «ზოგ-ზოგი ვაცია» — Մարդ կա որ...):

Սայաթ-Նովայի խաղերը այժմ և՛ ընթերցվում էին, և՛ երգվում, իսկ դա բորբոքում էր հետաքրքրությունը Սկանդար-Նովան կրթական երեք անգամ վերահրատարակեց իր ժողովածուն (1875, 1895, 1912 թթ.)՝ աստիճանաբար ավելացնելով Սայաթ-Նովայի խաղերի թիվը (վերջին հրատարակությունում ութ խաղ է զետեղված)⁸:

⁶ ქართული ძროსტომარია. ს. — 367., 1863.

⁷ Հնագրանի գրագրերը խոշոր դեր խաղացին Պետերբուրգի վրաց ուսանողության կրթության գործում:

⁸ «დროება», 1868, № 18, էջ 4:

⁹ Սկանդար-Նովան 1913 թ. մասնակցեց Սայաթ-Նովայի շուրջ ծավալող բանավեճին. կենսագրական-ավանդական մի քանի հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով («Հովիտ», 1913, № 15), Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված երկու բավական հետաքրքիր խաղ է գրել (նույն տեղ): Ի դեպ, Սկանդար-Նովան շատ մտերիմ էր Սունգուկյանին, նրան նվիրված երկարաշունչ ձև է հորինել:

Մենք մտադիր չենք այստեղ մեկ առ մեկ թվարկելու Սայաթ-Նովայի մյուս խաղերի հայտնաբերումն ու հրատարակումը¹⁰, Աժմ արդեն ինքնին պարզ է, որ վրաց գրականության մեջ մի նոր մասնաճյուղ էր ստեղծվում՝ սայաթ-նովագիտություն, աստիճանաբար ավելի ծավալվելով: Վրաց ամենահեղինակավոր պարբերականները նույնպես հետաքրքրվեցին Սայաթ-Նովայի գրական ժառանգությամբ: Հատկապես նշանավոր էր «Իվերիա» հանդեսի ելույթը՝ Սայաթ-Նովայի երեք խաղերի հրատարակությամբ: Հանդեսի հրատարակիչ ու խմբագիր Իլիա Ճավճավաձեն արժանվույն գնահատեց հայազգի աշուղ-լրանաստեղծի վրացական խաղերի գեղարվեստական-գաղափարական կատարելությունը¹¹: Համընդհանուր ճանաչում վայելող «Իվերիայի» (և նրա խմբագիր Իլ. Ճավճավաձեի) ելույթը նոր շրջան է պայմանավորում: Հատկապես արժեքավոր էր գրականագետ Ջաքարիա Ճիճինաձեի ծավալուն ելույթը (գրական կեղծանունը՝ Մթածմինդելի)¹²: Ջ. Ճիճինաձեն, ինչպես ինքն է նշում, ծանոթ էր Գ. Ախվերդյանի երկասիրությանը և որոշ տեղեկություններ նրանից էր վերցնում: Բայց վրաց գրականագետի մոտ կան մի քանի հաղորդումներ, որոնք արժեքավոր են Սայաթ-Նովայի մասին եղած ավանդությունների համեմատական ուսումնասիրության համար: Ճիճինաձեն անձամբ ականջալուր է եղել վրացի ծերունիների պատմածներին և գրառել կարևոր տեղեկությունները:

Հետաքրքիր է, որ վրացական միջավայրում ստեղծված ավանդությունները հիմնականում վերաբերում են Սայաթ-Նովայի Դարիայի վանքում ստացած կրթությանը, արեղա ձեռնադրվելուն, Հերակլ 2-րդի հանդես ունեցած մտերմութանը, արհեստին և այլն: Ըստ երևույթին վրացերեն խաղերի ընթերցողները կամ հենց վրացական միջավայրը արժանվույն են գնահատել հանձարեղ աշուղի ստեղծագործությունները՝ նրանց հեղինակին վանական կրթություն վերագրելով: Ժողովրդի պատկերացմամբ լավ բանաստեղծը լավ կրթություն պիտի ունենա, իսկ Դարիայի (Հերակլ 2-րդի կնոջ կողմից կառուցված) վանքը այդ առմամբ նշանավոր կրթօջախ էր: Ջ. Ճիճինաձեն գրառում է մի ուրիշ ավանդություն ևս: Պարսկաստանից սուրհանդակ է եկել Հերակլ արքայի մոտ՝ պարսից խանի մոտալուտ արշավանքը հաղորդելով: Հերակլը հույժ տխուր է: Սայաթ-Նովան «սրինգ» է նվագում իր սիրեցյալ արքայի մոտ և քայլերում նրան՝ իր ծառայությունն առաջարկելով: Նվագում է «Արաղի պես պղտոր ես, Քուռ» խաղը, այլաբանորեն Հերակլին Քուռ, իսկ պարսից խանին՝ Արաղ ներկայացնելով: Իրականում խաղը ոչինչ ընդհանուր չունի նման այլաբանության հետ: Բայց այս դեպքում ուշագրավ է մի այլ բան. պիտի կարծել, որ Սայաթ-Նովայի շուրջը ստեղծված ավանդությունների մի մասը նրա խաղերի ժողովրդական մեկնության վրա են հենված: Վերոբերյալ ավանդությունը հենց այդ է վկայում:

¹⁰ Վրացերեն խաղերի հրատարակության լիակատար մատենագիտությունը կազմել ենք առանձին:

¹¹ „Ոցցոն“, 1877, № 28, էջ 10, 11, № 30, էջ 12: Տպագրված են „სოფელსა და სოფელს...“ — Աշխարհից-աշխարհ՝ սար կա, ճշմարիտ է և „ძღვას ვით გააშრობს“ — Աստղալուսով ծովը ինչպե՞ս... խաղերը:

¹² „დროება“, 1878, № 119, էջ 2—3, № 120, էջ 2—3:

Նույն այս երևույթի արդյունք է նաև Զ. Ճիճինաձեի հաղորդած մի այլ ավանդություն՝ Սայաթ-Նովայի և արեղաների ընդհարման մասին, Վրացական (և ոչ միայն վրացական) միջավայրում անշուշտ գիտեին, որ Սայաթ-Նովան, իբրև պատիժ, ստիպված է «քահանանալ», իսկ ապա արեղա ձեռնադրվել: Բացառված. չէ, որ «նալխի նոքար Սայաթ-Նովան» կարող էր ընդհարվել իր միջավայրի՝ արեղայոց հետ: Դուրս իրոք այսպիսի լուրեր եղել են ժողովրդի մեջ, բայց այդ լուրը կարող էր իրական տեսք ստանալ նաև «Իմ խեղճ գլուխ, ինչ արիր» խաղի՝

ցրո յոյսց, թղզոցլոծա րատ մոնոլոտա?
 թոլո մոտեար, ծերոծա րատ մոնոլոտա...

Աշխարհական էի՝ քահանանալն ինչի՞ս էր
 Արի ասա՝ արեղայությունն ինչի՞ս էր...

տողերը մեկնելիս: Թեև Զ. Ճիճինաձեի ծավալուն հոդվածը առանձնապես մեծ գիտականություն չունի, բայց, ինչպես նշեցինք, ավանդությունների գրառումը ժամանակակից սայաթնովագիտության համար ինքնին արժեքավոր է: Նրանք մեկընդմիջտ փրկվեցին կորստյան վտանգից և օգնեցին տարածելու Սայաթ-Նովայի անունը վրաց գրական շրջաններում:

Ճիճինաձեից հետո, մինչև 10-ական թվականները, վրացական պարբերականներում ու առանձին աշխատություններում Սայաթ-Նովայի վերաբերյալ փոքրիկ հաղորդումներ են միայն հանդիպում¹³:

Սայաթնովագիտությունը նկատելի աշխուժացավ 1913 թ. հետո, երբ Լ. Թումանյանի գլխավորությամբ Թբիլիսիի հայ հասարակայնությունը, բացի երգչի խաղերը հրատարակելուց, ձեռնամուխ եղավ նրա հուշարձանի կառուցմանը: Այդ տարիներին արդեն շնորհալի բանաստեղծի անուն վաստակած Իոսեբ Գրիշաշվիլին, որ առանձնապես մոտիկ էր հայ հասարակայնության մտավոր գործունեությանը (Գրիշաշվիլին այժմ էլ նույն շնորհակալ ծառայությունն ունի և դիտե հայերեն՝ մանավանդ Թբիլիսիի հայոց բարբառը), ձեռնամուխ եղավ Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի հրատարակությանն ու հեղինակի գրական միջավայրը մենագրելուն¹⁴, Գրիշաշվիլին, Սայաթ-Նովայի գրական ժառանգության նկատմամբ, ըստ էության, վրաց իրականությանն մեջ նույն դերը կատարեց, ինչ Գ. Ախվերդյանը հայ մտավորականների շրջանում, այն տարբերությամբ, սակայն, որ վրաց ընթերցողը մինչ այդ արդեն ծանոթ էր Սայաթ-Նովայի խաղերի մի մասին: Դեռ մինչև իր աշխատասիրության հրատարակումը, Ի. Գրիշաշվիլին վրաց գրական հասարակայնության համար

¹³ Յ. Լ. Թ. Թ. Թ., Նախ. և մոսկ. Կոնստանդուպոլսի, 1894, էջ 77: Վ. Յ. Գ. Ե. Ե., «Կոնստանդուպոլսի», № 116, էջ 3: Հաղորդում Թբիլիսիի հայ գրողների ընկերության Սայաթ-Նովայի խաղերը վերահրատարակելու որոշման մասին, տե՛ս «Նախալոծո ցախեթի», 1913, № 1008, էջ 2 և այլն:

¹⁴ Այդ մասին վրացական մամուլում հաղորդում է հրատարակվել: Տես «Մեթոդիկ և Երկրորդ», 1919, № 35, էջ 18: Վրացերեն խաղերը հրատարակության պատրաստելիս (հատկապես վերծանելիս) Ի. Գրիշաշվիլուն օժանդակել ու որոշ խաղեր անձամբ արտագրելու դարձել է ակադ. Ն. Մալո (այդ մասին տե՛ս «Նախալոծո ցախեթի», 1917, № 766, էջ 4, ծան.):

մի քանի դասախոսություններ կարգացրեց: Ժամանակի մամուլում հետաքրքիր արձագանքներ են տպագրվել այդ դասախոսությունների մասին¹⁵:

Դասախոսություններին մասնակցած մատենագետ Թամարա Մաճավարիանին պատմում է, որ դրանք երբեմն ուղեկցվում էին երաժշտական հատումներով և Թբիլիսիի բանաստեղծական տոնն էին: XVIII և մասամբ XIX դարի Թբիլիսիի աշուղական-ժողովրդական խաղերի մի առանձնահատուկ մրցատեղ էր: «Կինտոների» հետ միսթամանակ անցյալի վերհուշ դարձավ և աշուղական այդ ինքնատիպ միջավայրը: Գրիշաշվիլու դասախոսությունները վերստեղծում էին այդ ոչ այնքան հեռավոր անցյալը. իսկ Թբիլիսցին շատ զգայուն է իր քաղաքի անցյալի նկատմամբ: Դասախոսը ինքը ևս այդ տարիներին արևելյան պոեզիայի ազդեցությունն էր կրում, մանավանդ Սայաթ-Նովայի 2. Թումանյանը քաջալերում էր Գրիշաշվիլու ձեռնարկումը՝ Սայաթ-Նովայի գրական միջավայրի պատկերումը տալու սպասումով:

1918 թ. լույս տեսավ Ի. Գրիշաշվիլու «Սայաթ-Նովա» երկասիրությունը՝ մենագրություն, բնագրեր ու բառարան: Ինչպես և պետք էր սպասել, աշխատությունը բացառիկ հետաքրքրություն առաջացրեց: Տասնյակ գրչագրերում կատարված սյրպտումները հնարավորություն էին տվել բանասեր-բանաստեղծին մենագրություն գրել ոչ միայն Սայաթ-Նովայի, այլ նաև աշուղական պոեզիայի մասին առհասարակ: Առաջին անգամ հայտնի դարձան տամնյակ անոճներ, իսկ նրանց առնչությունը Սայաթ-Նովային՝ գրքին տալիս էր ընդհանրացնող բնույթ: Մանրամասն քննվում են աշուղական «արհեստն» ու նրա ինքնությունը, հին Թբիլիսի առօրյայի, նիստուկացի վուզորդմամբ, աշուղների շրջանում գոյություն ունեցող ավանդական սվորույթները, մրցակցության տեսակներն ու եղանակները, գրական ժանրերն ու նրանց արևելյան առումը և, ի վերջո, այս ամենի աղբյուրը հին Թբիլիսի հետ:

Նույնքան արժեքավոր է նաև բնագրերի հրատարակությունը: Մինչ այդ ընթերցողին ծանոթ էր Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի մի մասը միայն: Ի. Գրիշաշվիլին հրատարակեց 28 խաղ, XVIII—XIX դարերի գրչագրերից: Գրիշաշվիլին սոսկ տեքստեր չի հավաքել. այն ժամանակ Սայաթ-Նովայի որոշ խաղեր հայտնի էին եղակի և պակասավոր օրինակներով, նույն վիճակում հրատարակելու դեպքում որոշակի կտուժեր խաղերի ամբողջականությունը: Ուստի հրատարակող-բանասերը իր բանաստեղծական տաղանդը կիրառեց և այստեղ, Ինչ խոսք, բանասիրության արդի պայմաններում կարելի է գրչագրերի համեմատական բնագիր կազմել, բայց 1918 թ. այդ հնարավոր չէր (չկային տարբերակներ) և Գրիշաշվիլու մատուցած ծառայությունը, այս առումով, արժանի է մեծ երախտագիտության¹⁶:

¹⁵ Տե՛ս «Նախաձեռնություն» 1917, № 797, էջ 2:

¹⁶ Ի. Գրիշաշվիլին հին Թբիլիսիի գրականությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն հրատարակեց 1927 թ.՝ «Հին Թբիլիսիի գրական թոհորոհը» խորագրով (ძველი ტფილისის ლიტერატურული მემკვიდრეები): Ինչպես Սայաթ-Նովային նվիրված աշխատությունը, այնպես էլ վերջինս հույժ շահավետ կլինեին նաև հայ ընթերցողի համար: XVIII—XIX դարերի հայ գրականությունը անմիջական աղբյուր ունի հին Թբիլիսիի հետ և հիշյալ աշխատությունների թարգմանությունը կօգնեց հասկանալու գրական միջավայրը: Իլ չենք ասում, որ ուսումնասիրած աշուղ-սագանդարների մի մասը հայագրի է, թեկուզ երբեմն վրացարան: Գ. Սունդուկյանին նախորդող Թբիլիսիի պատմության ուսումնասիրությունը րացառիկ կարևոր է և հետաքրքրական:

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը արդեն քաջածանոթ էին վրաց գրականության պատմության տեսաբաններին: Այժմ կարելի էր նրան հատկացնել իր արժանավոր տեղը վրաց մշակույթի պատմության մեջ: 1924 թ. լույս տեսավ ակադ. Կ. Կեկելիձեի «Վրաց գրականության պատմություն» նշանավոր աշխատության երկրորդ հատորը: Մեծսկստակ գիտնականը Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը մի առանձին բաժին էր հատկացրել: Նա, բացի Ի. Գրիշաշվիլու հրատարակությունից, վրացական գրչագրերից քաղել էր մի այլ խաղ ևս՝ Սայաթ-Նովային հատկացնելով¹⁷: Ինքնին հասկանալի է, որ Կ. Կեկելիձեն նպատակ չի ունեցել բոլոր հարցերը իրեն հատուկ բազմակողմանիությամբ քննել, որովհետև գործ ուներ ուսումնական ձեռնարկի հետ: Այնուամենայնիվ նա մի շարք ուշագրավ դիտողություններ է անում ծննդյան տարեթվի, գրական միջավայրի, բանաստեղծական արվեստի և այլ հարցերի մասին:

Սայաթ-Նովային «Վրաց հին գրականության» մեջ հատուկ ենթաբաժին հատկացնելը ինքնին արդեն գիտական կողմնորոշում էր, մանավանդ որ այդ կողմնորոշողը խոշոր և խստապահանջ վրացագետ Կ. Կեկելիձեն էր: «Վրաց հին գրականության պատմությունը» շորս անգամ վերահրատարակվել է¹⁸, իսկ ամփոփվող նյութերը, այդ թվում և «Սայաթ-Նովա» բաժինը, աստիճանաբար լրացվել են նոր մեկնություններով ու փաստարկումներով:

Վրացի գիտնականները, հատկապես ակադ. բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, տարեցտարի Սայաթ-Նովային վերաբերող նոր նյութեր ու նրա հեղինակությունը կրող խաղեր էին պրպտում: 1924 թ. վրացական «Յոզոստոն» հանդեսում (№ 3—4, էջ 127—128) հրապարակվեց մի նոր խաղ: Նրբ տարիներ հետո (1934 թ.) այդ խաղն իրեն նորագյուտ մատուցվեց, Ի. Գրիշաշվիլին պատասխանեց այդ «գյուտին» և նոր միայն հայտնի դարձավ, որ հրատարակող-ծանոթագրողն ինքն է եղել¹⁹: Այդ նույն պատասխանից էլ տեղեկանում ենք, որ սայաթնովագետը մտադիր է եղել մյուս խաղը ևս («ჩემსა ვარდსა ღაგბსენი» — «Թող իմ վարդին») հրատարակել, բայց հանդեսի փակման կապակցությամբ չնագիրը մնացել է խմբագրության արխիվում:

Բնութագրելով Սայաթ-Նովայի յուրաքանչյուր նորահայտ խաղի նշանակությունն ու կարևորությունը, Ի. Գրիշաշվիլին գրում էր. «Միշտ ինչ որ մի հպարտություն եմ զգում, երբ Սայաթ-Նովային վերաբերող հոդվածներ եմ կարդում, իսկ նրա անծանոթ խաղերի հայտնաբերումը հո այս քաղաքի բանահյուսության տոն կնշանակի»²⁰:

Վրաց սայաթնովագիտության պատմության մեջ հատկապես նշանավոր է 1930 թվականը, երբ գրեթե միաժամանակ հրատարակվեցին պրոֆ. Լ. Մելիքսենթ-Բեկի և Գ. Լեոնիձեի մենագրությունները Սայաթ-Նովայի մասին²¹: Մինչ

17 Տե՛ս էջ 483—487:

18 Վերջին հրատ.՝ 1958 թ.:

19 Տե՛ս նրա հոդվածը՝ «Սայաթ-Նովայի անծանոթ խաղերը», ლიტერატურული გაზეთი, 1934, № 27, էջ 5:

20 Նույն տեղում: Ի. Գրիշաշվիլին Սայաթ-Նովային ձոնած բանաստեղծություն ունի. նա թարգմանել է նաև 2. Թումանյանի «Սայաթ-Նովա» հանրահայտ բանաստեղծությունը: Թարգմ. հրատ. տե՛ս «მნათობი», 1948, № 4, էջ 24:

21 Լ. Մելիքսենթ-Բեկի, სიათნოვა, ქართ. წიგნი, 1930; Գ. Լեոնիձե, მგოსანი-სიათნოვა, 1930.

այդ հա սայաթնովագետները սկզբունքային բանավեճ էին մղում Սայաթ-Նովային վերաբերող մի շարք հարցերի շուրջ: Լեոյի և Գ. Ասատուրի այդ բանավեճը («Նորհրդային Հայաստան», 1926 թ.) բորբոքեց և Վրաստանում ապրող հայադեռ-վրացագետների հետաքրքրությունը:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի մենագրության դրդապատճառներից մեկը (և հիմնականը), ինչպես հեղինակն է նշում, այդ բանավեճում արժարժույթ հարցադրումներին պատասխան տալն էր՝ վրացական աղբյուրների օգտագործմամբ: Աշխատությունը դուրս եկավ նշված սահմաններից և մի շարք նոր խնդիրներ ու փաստեր առաջադրեց:

Պրոֆ. Մելիքսեթ-Բեկի սույն աշխատությունը մի տեսակ ընդհանրացնող բնույթ ունի, թեև ոչ քիչ հարցեր այստեղ ևս վիճելի են: Հիմնական արժանիքը, մեր կարծիքով, Սայաթ-Նովայի ինքնագրերի վերծանումն ու պատշաճ օգտագործումն է, իսկ բաղմամբով ճշտումներն ու նախորդ բանասերների թերացումների սրբազրույթը աշխատությունը մատենագիտական ամբողջություն է տալիս: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, ի տարբերություն մյուս սայաթնովագետների, լրիվ օգտագործում է հայկական ու վրացական աղբյուրները: Այդ իսկ պատճառով էլ այս մենագրությունը արժեքավոր է և ուշադրության արժանի, հատկապես վրացական աղբյուրներին ոչ քաջադիտակ մասնագետների համար: Աշխատությունը ժամանակին արժանացավ ակադ. Կ. Կեկելիձեի ուշադրությանը: Այն նկատելի ազդեցություն ունեցավ հետագա սայաթնովագիտական ուսումնասիրությունների վրա՝ մանավանդ Վրաստանում: Եթե աշխատությունը թարգմանվեր հայերեն՝ հայ սայաթնովագիտությունը անշուշտ կշահեր, գոնե մատենագիտական տեղեկություններ քաղելով: Ի պատիվ Մելիքսեթ-Բեկի պիտի նկատել, որ աշխատության հիմնական մասը՝ նախորդ սայաթնովագետների երկասիրություններից տարբերվում է իր ակադեմիականությամբ, փաստական հագեցվածությամբ և ենթադրությունների պակասով (իհարկե, խոսքը Ախվերդյանին չի վերաբերում): Բոլոր հարցերը, այդ թվում և վիճելի կամ անընդունելի համարվողները, փաստական որոշակի հիմք ունեն:

Նշանակալից ու արժեքավոր է և սկադ. Գ. Լեոնիձեի մենագրությունը²², Սայաթ-Նովայի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող մի շարք հարցեր այստեղ նորահայտ աղբյուրների կիրառմամբ են քննվում: Գ. Լեոնիձեն իր աշխատությունը շարադրելիս նկատի է ունեցել Վրաստանի տարբեր հնագարաններում պահվող գրչագրերի ընձևած նորությունները՝ շատ հաճախ համեմատական կիրառմամբ օգտագործելով այն: Քննելով մենագրելու դրդապատճառները, հեղինակը գրում է. «Սայաթ-Նովան ... ըստ արժանվույն չի ուսումնասիրված և նրա կենսագրության ու գրական [գործունեության] բաղմամբով հարցեր դեռևս մշուշապատ են»²³:

Ինքնին հասկանալի է Գ. Լեոնիձեի նպատակը. վերաբնեւ որոշ հարցեր, նոր վկայություններ կիրառելով: Աշխատության ընդգրկումն այսպիսին է.

1 Վկայություններ Սայաթ-Նովայի անձնավորության, ծննդյան ու դաստիարակության մասին՝ ըստ վրացական նոր աղբյուրների (էջ 9—13):

²² Աշխատությունը գրված է 1928 թ. և 1929 թ. հունվարի 10-ին կարդացված է որպես զեկուցում: Հետագայում այն լրացվեց Լեոնիզրադի արևելագիտության ինստիտուտում պահվող մի քանի արժեքավոր սկզբնաղբյուրներով և 1930 թ. առանձին զրբով հրատարակվեց:

²³ Նշվ. աշխ., էջ 6:

- 2 Սայաթ-Նովան շերակը 2-րդի սաղանդար (էջ 14—16):
- 3 Սայաթ-Նովան պալատական «զվարճախոս» (էջ 17—18):
- 4 Սայաթ-Նովան դիվանագիտական գործիչ շի եղել (էջ 19—20):
- 5 Երգչի վտարումը պալատից (էջ 21—25):
- 6 Ծի՞շտ է, թե ոչ Սայաթ-Նովայի եպիսկոպոսությունը (էջ 26—32):
- 7 Սայաթ-Նովայի մահվան տարեթվի հարցի շուրջ (էջ 33—46):

2-րդ բաժին. կենսադրական դիտողություններ.

8. Երգչի անունը, նրա խաղերի ճակատագիրը (էջ 49—61):

9. Լեոնիձեի ուսումնասիրությունը Սայաթ-Նովայի մասին գրված յալագույն երկերից է. արդեն նշեցինք, որ վրացական մի քանի աղբյուրներ առաջին անգամ էին բանասիրական քննության հիմք դառնում: Այստեղ վրաց ընթերցողին ներկայացվեց Սայաթ-Նովայի մի անծանոթ (նորահատ) խաղ և եղևուկալամբուր: Երեսնական թվականներին դեռևս հրատարակված չէր Հովհան արքայազնի «Վալմասորա» արժեքավոր մենագրությունը, բայց Գ. Լեոնիձեն ձեռագրից հատվածել էր Սայաթ-Նովային վերաբերող մասը և բանասիրական նոր հարցադրում արել:

Սայաթ-Նովայի խաղերի նոր ու կատարյալ հրատարակության անհրաժեշտության մասին է դրել վրաց տաղամոլալոր և Չարինցի բախտակից բանաստեղծ Տիցիան Տարիձեն²⁴: Նա առանձնահատուկ ուշադրությամբ ու դրվատանքով էր խոսում Սայաթ-Նովայի բազմալեզվյան քնարերգության մասին՝ մշակութային-պատմական ճանաչողական արժեքի ընդդժմամբ. «Մեր ժամանակի բանաստեղծներս ոչ միայն այս երեք լեզվով գրելը, այլև մեկ-մյուսի ընթերցումն ու հասկանալն էլ չենք հաջողում: Սայաթ-Նովան թեկուզ հենց դրանով է նախընտրելի է ու գերադասելի, որպեսզի մեր սերունդը ճանաչի նրա մեծագույն ծառայությունը»²⁵:

1935 թ. Լ. Մելիքսեթ-Բեկը հանդես եկավ Սայաթ-Նովային նվիրված նոր երկասիրություններով: Նախ ուսումնասիրեց Սայաթ-Նովայի ստեղծագործության գրական-ժողովրդական տղբյուրները²⁶, ապա այն միակցեց հա երես խաղերի իր կատարած վրացերեն թարգմանությանն ու հրատարակեց առանձին գրքով՝ «Սայաթ-Նովա» (հայկական խաղերը վրացերեն)²⁷: Գրքի առաջին բաժնում (Առաջաբան և ներածություն) ուսումնասիրված են հայ և վրաց մատենագրության և բանահյուսության այն «պատմությունները», զրուցները, ավանդություններն ու կանոնական-հոգևոր աղբյուրները, որոնց անմիջական կամ հեռավոր արձագանքը կա Սայաթ-Նովայի խաղերում: Ինքնին հասկանալի է այսպիսի ուսումնասիրության գիտական անհրաժեշտությունը: Սայաթ-Նովան, ըստ ամենայնի, այլևս աշուղ չէ, այլ՝ նախնյաց մատենագրության բազմաթիվ աղբյուրների գիտակ (և քաջագիտակ) բանաստեղծ, իր գրական դասական նախորդներն ու ավանդակներն ունեցող մտավորական:

²⁴ „Լուծ. ձեռնոց“. 1934, № 28, էջ 3—4:

²⁵ 1934 թ. գրողների համամիութենական համագումարում Մ. Տորոչևիձեն զեկուցեց Վրաց գրականությունը թևալով. բնականաբար, տեղ հատկացնելով և Սայաթ-Նովային, տպագրությունը տե՛ս „Ձեռնոց“, 1934, № 7—8, էջ 220—245: Սայաթ-Նովայի մասին՝ էջ 238—239:

²⁶ „Լուծ. մեթոդաբան“, 1935, էջ 237—254:

²⁷ Երևան, 1935, աշխատությունը գրախոսել է վաղամեծ հայագետ-վրացագետ Իվան Բեգլարովը, տե՛ս „Նախաձեռնություն“, 1936, № 74, էջ 4:

Երկրորդ բաժինը՝ «[Հայկական] խաղերի ժողովածու» (վրացերեն թարգմանությունում) նույնպես շնորհակալ աշխատանք է, որով հրապարակի վրա է գրվել հիշյալ խաղերի տողացի փոխադրումը՝ գիտական սկզբնաղբյուր բանաստեղծական թարգմանության համար:

Նույն տարիներին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը զբաղվում էր նաև մի այլ Սայաթ-Նովայի նահատակության հարցով: Նա հետևողականորեն ճշտում ու լրացնում էր դեռևս 1930 թ. արտահայտած իր տեսակետը, թե Սայաթ-Նովան չի նահատակվել, և ավանդությունը շփոթում է Մխիթարին ու Ստեփանոս-Սայաթ-Նովային: «Ի՞նչա ինչա շփոթում է Սայաստանում և Սայաթ-Նովան» հոդվածում²⁸ «Կամասոբայի» այդ հատվածին վերաբերող ժամանակագրական հաշվումների ու քննության հիմամբ պրոֆ. Մելիքսեթ-Բեկը նորից հաստատում էր իր ժխտողական վերաբերմունքը նշված ավանդության հանդեպ²⁹:

Սայաթ-Նովայի գրական ժառանգության զաղափարական վերլուծությանը նվիրված առաջին հոդվածներից մեկը ակադ. Ալ. Բարամիձեին է պատկանում³⁰: Հետագայում (1940 թ.) Ալ. Բարամիձեն ավելի ծավալեց նշված հոդվածը և վետեղեց «Ակնարկներ վրաց գրականության պատմության» գրքում՝ նորից խաղերի սոցիալական-աշխատավորական երանգների մնությունն ընդգծմամբ³¹:

«Զվենի թաղ» հանդեսը 1939 թ. հրատարակեց Ի. Բալախաշվիլու «Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարց» խորագիրը կրող հոդվածը³²: Հեղինակը բանավիճում է Լ. Մելիքսեթ-Բեկի հետ և մերժում նրա «ղերձակության» վարկածը, բայց ինքն էլ մի այլ ծայրահեղություն է ստեղծում՝ Սայաթ-Նովային «գուրգար» հայտարարելով: Համեմատաբար ավելի արժեքավոր է Սայաթ-Նովայի՝ պալատից վտարման պատճառներին վերաբերող բաժինը՝ Հերակլի դեմ կազմակերպված դավադրությանը առնչելով: Սակայն, մեր կարծիքով, այստեղ ևս ավելի շատ արհեստական հարմարեցում կա, քան պատմականություն:

Վրաց սայաթնովագիտության հաջորդ շրջանը պատերազմի ավարտից հետո է սկսվում: 1945 թ. Սայաթ-Նովայի հոբելյանական օրերին, վրացական հանդեսներն ու թերթերը հրապարակեցին մի քանի գիտնականների հոդվածներ Սայաթ-Նովայի մասին: «Գրականություն և արվեստ» պարբերականի № 32-ը նվիրված է մեծանուն բանաստեղծին: Թերթը հրապարակել է ակադ. Կ. Կեկելիձեի «Սայաթ-Նովա» հոդվածը, ուր բազմավաստակ գիտնականը իրեն հատուկ հակիրճությամբ գիտական մի քանի հարցեր է քննում. հատկապես նոր էր աշուղական պոեզիայի վրացական ակունքներին վերաբերող դիտողությունը: Նույն համարում լարգմանաբար տպագրվեցին Վ. Բրյուսովի խորհրդածությունները երգչի մասին (նշանավոր «Ծաղկաբաղի» առաջաբանից հատվածելով), Լ. Մելիքսեթ-Բեկի մատենագիտական հաղորդումը³³, Ս. Ավչյանի «Մեծ աշուղ-բանաստեղծը» հոդվածը և այլն:

²⁸ Այժ ԹՊԾ. ԹՊԾԾՅ, 9—B (1), 1936, էջ 121—135:

²⁹ Նույն տեսակետը պահպանվում է և 1941 թ. լույս տեսած ԱՊԾԾԾԾԾ ԼՈՒԹ. ՈՆԾԾԾԾԾ գրքում (էջ 149—208):

³⁰ «ԹՊԾ», № 92, էջ 3, № 93, էջ 3, 1936 թ.:

³¹ Գ. 2, էջ 314—316:

³² № 7, էջ 59—64:

³³ Հոդվածն անստորագիր է:

Հորելյանական մեծարումների ժամանակ, սովորաբար, գիտական հարցեր քիչ են քննվում: Բայց այս դեպքում էլ արդյունքը ուրախալի է. մեծարվող հեղինակը առավել շափով է հանրաճանաչ դառնում: Այդպես եղավ նաև 1945 թ. Սայաթ-Նովայի հորելյանական օրերին: Անմասն շմնաց և վրաց սայաթնովագիտության իսկական հիմնադիրը՝ Ի. Գրիշաշվիլին³⁴, Հորելյանական երեկոյի ժամանակ³⁵, ի թիվս այլ գիտնականների, զեկուցում կարդաց ակադ. Կ. Կեկելիձենու: Հետագա տարիներին (մինչև մեր օրերը) Սայաթ-Նովայի մասին տասնյակի հասնող հոդվածներ են դրվել՝ տարբեր շարժառիթներով. Ալ. Բարամիձեի հոդվածը³⁶, որի ուսերեն տարբերակը հրատարակվեց Հայաստանի ԳԱ «Տեղեկագրում»՝ «Саят-Нова по грузинским источникам» վերնագրով, վերահրատարակվեց Գ. Լեոնիձեի մենագրությունը՝ աննշան կրճատումներով³⁷, մասնակի համալրմամբ վերահրատարակվեց Կ. Կեկելիձեի «Վրաց հին մատենագրության պատմությունը» (1952 թ.)³⁸, Ակադ. Կ. Կեկելիձեն և Ալ. Բարամիձեի համատեղ հրատարակեցին «Վրաց գրականության պատմություն», ուր ըստ արժանվույն տեղ է հատկացված Սայաթ-Նովային՝ (արդեն հայտնի դրույթների վերաշարադրմամբ)³⁹, Լույս տեսան Ի. Գրիշաշվիլու «Սայաթ-Նովայի հիշատակին» (1957)⁴⁰, «Սայաթ-Նովա» (1962 թ.) հոդվածները և այլն:

Այսպիսով, վրաց սայաթնովագիտությունը բավական երկար ճանապարհ է անցել տարբեր շրջաններում առանձին կարևորություն ունեցող հարցեր քննարկելով: Բազմաթիվ գիտնականներ են մասնակցել գրական այդ հարընթացին, իհարկե, ամեն մեկը իր կարողության շրջանակում, Կան հոդվածներ, որ վերապատմում են վաղուց հայտնին, գրված են սոսկ առիթի դրդմամբ: Բայց քիչ չեն և ծանրակշիռ աշխատությունները, որոնց նշանակությունը հետաքրքիր է և հայ սայաթնովագիտության պատմության համար:

Սայաթ-Նովայի գրական ժառանգությունն այնքան մեծ է ու բազմակողմանի, որ պատմական կարճ ժամանակամիջոցում անհնար է ամեն ինչ սպառել: Սայաթնովագիտությունն ավելի քան հարյուր տարվա պատմություն ունի, բայց դեռ շատ ժամանակ կպահանջի Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը ըստ ամենայնի արժեքավորելու, անսխալ կենսագրությունը կազմելու, ենթադրությունները փաստերով փոխարինելու համար:

Վրաց սայաթնովագետները, ինչպես տեսանք, Սայաթ-Նովային առնչվող հարցերով շատ են զբաղվել և նշանակալի հաջողության հասել: Բայց դեռևս ուսումնասիրության կարոտ տասնյակ հարցեր կան: Մեր կարծիքով այդ հարցերից են.

ա) Վրացական տաղերի համեմատական բնագրի հրատարակումը: Մինչև այժմ հրատարակված գրեթե բոլոր տաղերը ձեռագրական մի տարբերակ են ներկայացնում: Համեմատական տեքստը պայմաններ կստեղծի վերականգնելու անադարտ բնագիրը, օտարելու հետագա հավելումները և ճիշտ հասկանալու (նաև մեկնելու) խաղերը:

³⁴ Նրա «Սայաթ-Նովա» հոդվածը տե՛ս «Վրացական», 1945, № 192, էջ 3:

³⁵ Նրեկոն տեղի է ունեցել 1945 թ. հոկտ. 8-ին:

³⁶ Վրացական տե՛ս. տե՛ս «Վրացական», 1947, էջ 175—184:

³⁷ Վրացական, 1949, էջ 262—303:

³⁸ Սայաթ-Նովային է վերաբերում էջ 562—567-ը:

³⁹ 1954 թ., էջ 469—479:

⁴⁰ Վրացական, 1957, էջ 220—223 (գրված է 1945 թ.):

բ) Հայկական խաղերը կարոտ են վրացական գեղարվեստական թարգմանության, Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանությունը հաջող սկիզբ է, բայց Գրիշաշվիլու պես արևելյան բանաստեղծության քաջագիտակ բանաստեղծի թարգմանություն է հարկավոր՝ թարգմանելուց առաջ բնագրի բառագանձի բնույթի հաշվառմամբ: Նույնքան կարևոր է և վրացական խաղերի լեզվաոճական առանձնահատկությունների նկատառումը:

գ) Ազրբեջաներեն գրված 114 խաղերը դեռևս կատարելապես անծանոթ են վրացի ընթերցողին (հայերին՝ կիսով չափ): Սայաթ-Նովայի գրական ժառանգության նկատմամբ ունեցած պատկերացումը (մասնագետի թե ընթերցողի)՝ առանց ազրբեջաներեն խաղերի թարգմանության, ամփոփ լինել չի կարող:

դ) Բանասերները ավելի շատ զբաղվել են Սայաթ-Նովայի կենսագրությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությամբ, մինչդեռ նրա խաղերը իբրև գեղարվեստական խոսք տակավին բազմակողմանի ու խորը ուսումնասիրված չեն:

ե) Դեռևս ուսումնասիրման կարոտ է աշուղական քնարերգության (այս դեպքում՝ Սայաթ-Նովայի) մերձավոր աղերսը վրաց բանաստեղծությանը, ավելի վաղ գոյություն ունեցող մատենագրությանը: Արդյո՞ք Սայաթ-Նովան «ներմուծեց» աշուղություն՝ պալատական նկատառումներին հարմարեցնելով, թե՛ արդեն գոյություն ունեցած տրագիցիաներին նոր երանգ տվեց (թեկուզ արևելյան):

զ) Ուսումնասիրության կարոտ է Սայաթ-Նովայի խաղերի ժանրային առանձնահատկությունը, արևելյան ընդունված չափերից նկատվող խոտորումը (օրինակ՝ մաջամայի ժանրում), այդ տարբերության պատճառների բացահայտումը: Պետք է դեռևս պարզել, թե ի՞նչ առնչություն կա Սայաթ-Նովայի և նրա նախորդ պարսկահանգ բանաստեղծների երգերի միջև՝ ժանրային-կատարողական առումով:

է) Սայաթ-Նովայի և Բեսիկիի երգերի որոշ ընդհանրության սկզբնաղբյուրի քննումը, ազդեցության և տրագիցիայի տարբերակումը այս շրջանի (XVIII դար) բանաստեղծական արվեստում՝ Սայաթ-Նովայի առնչմամբ: